ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---»----------2022թ. **N ----- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N10-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) N2 հավելվածում «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Շինարարության և բարեկարգման վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

	Շինարարության և բարեկարգման վարչություն				
1	Վարչության պետ	1	697,000		697,000
2	Վարչության պետի տեղակալ	2	561,000		1,122,000
3	գործավար	1	248,200		248,200
	Շինարարական ծրագրերի կառավարման բաժին				
4	Բաժնի պետ	1	408,000		408,000
5	Գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
6	Առաջատար մասնագետ	3	282,200		846,600
	Նախագծերի կառավարման և փաստաթղթաշրջանառության բաժին				
7	Բաժնի պետ	1	408,000		408,000
8	Գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
9	Առաջատար մասնագետ	2	282,200		564,400
10	Առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
	Ճանապարհների շահագործման և սպասարկման բաժին				
12	Բաժնի պետ	1	408,000		408,000
13	Գլխավոր մասնագետ	1	289,000		289,000
14	Առաջատար մասնագետ	1	282,200		282,200
15	Առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
	Ընդամենը՝	**20**			**6,973,400**

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ընդամենը՝ Երևանի քաղաքապետարան» տողում «638.5», «216,841,580» թվերը փոխարինե լիամապատասխանաբար «642.5», «218,364,780» թվերով:

3) «Ամբողջը» տողում «1980.5», «604,043,780» թվերը փոխարինել«1984.5»,

«605,566,980» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Շինարարության և բարեկարգման վարչությունը ունի առաջնային նշանակություն, քանի որ վարչությունը վերահսկում է Երևան քաղաքում իրականացվող բոլոր տեսակի շինարարական աշխատանքները, որոնք իրականացվում են համայնքային բյուջեի ծրագրերով:

Երևան քաղաքի ավագանու 29.10.2018 թվականի թիվ 10-Ա որոշմամբ հաստատված հաստիքացուցակի համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է հանդիսանում Շինարարության և բարեկարգման վարչությունը:

Կարևորելով տվյալ ոլորտի դերն ու նշանակությունը, նախատեսվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքում նույնպես բարձրացնել Շինարարության և բարեկարգման վարչության դերը: Վարչությունում հաստիքների ընդհանուր թիվը 16 է՝ վարչության պետ, պետի տեղակալ 1 /մեկ/, գործավար 1/մեկ/, բաժնի պետ՝ 2/երկու/, գլխավոր մասնագետ՝ 5/հինգ/, առաջատար մասնագետ՝ 5/հինգ/, առաջին կարգի մասնագետ՝ 1/մեկ/: Վարչությունը նշված կազմով իր կանոնադրությանը համապատասխան նպաստում է այն խնդիրների իրագործմանը, որոնք բխում են շինարարության և բարեկարգման հարցերի բնագավառում իրավական ակտերով Երևանի քաղաքապետին վերապահված լիազորություններից:

Վարչության գործառույթների մեջ է մտնում գնման հայտի ներկայացում, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում, պայմանագրերի կառավարում, շինարարության կազմակերպում, շինարարական աշխատանքների վերահսկում, շինարարության հետ կապված վարչարարության և փաստաթղթավարության կազմակերպում, շինարարության ավարտական ակտ:

Համաձայն Երևան քաղաքի 2022-2023 թվականների բյուջետային հայտերի վերաբերյալ շինարարության և բարեկարգման վարչության կողմից ներկայացված տեղեկանքի 2023 թվականին վարչության կողմից պետք է իրականացվի Երևան քաղաքի մինչև 200 կմ ճանապարհների միջին նորոգման աշխատանքներ, թվով 11 մանկապարտեզների կապիտալ վերանորոգման աշխատանքներ, թվով 4 մանկապարտեզների բակի բարեկարգման աշխատանքներ, 3 մանկապարտեզների քանդում և հարակից տարածքում նորի տեղակապումով կառուցելու աշխատանքներ, Երևանի «Պատանի հանդիսատեսի թատրոն» ՀՈԱԿ-ի և «Մանկապատանեկան ստեղծագործական քաղաքային կենտրոնի» տարածքների հիմնանորոգում, Մաշտոցի 7 ա հասցեում գտնվող «Հայ-Արտ» մշակութային կենտրոնի հիմնանորոգում, «Էրեբունի»

պատմահնագիտական արգելոց-թանգարանի հիմնանորոգում, Երևան քաղաքի Սբ.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու մոտ շատրվանների կառուցման, թվով 3 պոլիկլինիկաների հիմնանորոգման, «Շտապ բուժօգնություն» ՓԲ ընկերության ադմինիստրատիվ շենքի տանիքի և ջեռուցման համակարգի վերանորոգման, թվով 98 հիդրանտների նորոգման, «Հաղթանակ» կամրջի բարեկարգման, Երևան քաղաքի «Մալիբու» այգուց դեպի «Մանկական երկաթուղի» զբոսայգին կապող թունելների ամրացման, Կիևյան 4,6,8,10 շենքների միացյալ բակի բարեկարգման, Արարատյան փողոցի էստակադայի հիմնանորոգման, գերեզմանատների առկա թվով 6 շենքների վերանորոգման և թվով 7 նոր շենքերի կառուցման, «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ի ադմինիստրատիվ շենքի վերանորոգման, Դավիթ Անհաղթ-Կոմիտաս փողոցները միացնող ուղեկապի հիմնանորոգման, Երևան քաղաքի «Կենադանաբանական այգու» վարչական և հարակից օժանդակ շինության հիմնանորոգման, ցանկապատի կառուցման, Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցի նկուղի և 7 մարզասրահների/3+4/ և մի շարք այլ շին. աշխատանքների, ինչպես նաև Երևան քաղաքի էներգաարդյունավետության ծրագրով իրականցվող թվով 32 մանկապարտեզների և հինգ պոլիկլինիկաների շինարարության վերահսկողությունը՝ համաձայն Երևանի քաղաքապետի 12.10.2020թ-ի 3158-Ա որոշմամբ իրականացվում է նույնպես Շինարարության և բարեկարգման վարչությունը:

Նոր ավելացվող ճանապարհների շահագործման և սպասարկման բաժինը պետք է զբաղվի Երևան քաղաքի ավտոճանապարհների ընթացիկ նորոգման և սպասարկման աշխատանքներով, ու կազմված է լինելու 4 հաստիքային միավորից.

Բաժնի պետ	1
Գլխավոր մասնագետ	1
Առաջատար մասնագետ	1
Առաջին կարգի մասնագետ	1

Վարչության հաստիքների ընդհանուր թիվը 16 է և հաշվի առնելով աշխատանքների նմանօրինակ ծավալը, ինչպես նաև հետագայում առաջացող հրատապ լուծում պահանջող աշխատանքները, նշված ոլորտի գործունեության և կառավարման արդյունավետությունը, ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման և հեռանկարային զարգացման կանոնակարգերի մշակման գործառույթների ապահովման հանգամանքով վարչությունը առաջարկում է կատարել վերոնշյալ վերակազմակերպումը և վարչությունը համալրել ևս 4 հաստիքով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշմաննախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում ծախսերի էական փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ